ԲՈՒՀԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՎՐԱ

ԻՍԿՈՅԱՆ Լ. Ա.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Լ.Ա.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՇՊՀ

Ապագա մասնագետների սոցիալական կայացման գործընթացի վրա բուհի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցության հիմնահարցը արդի ժամանակաշրջանում դարձել է սոցիոլոգների, հոգեբանների, մանկավարժների, մշակութաբանների քննարկման առարկա:

Միջավայրի մանկավարժական ներուժի, դերի և անձի վրա նրա դաստիարակչական ազդեցության հարցերը դիտարկվել են նաև մանկավարժության դասականների (Ժան-ժակ Ռուսսո, Յան Ամոս Կոմենսկի, Իոհան Պեստալոցցի, Կ.Դ.Ուշինսկի, Վ.Ա. Սուխոմլինսկի, Մ. Մաշտոց, Մ.Խորենացի, Խ.Աբովյան, Ղ.Աղայան, Ռաֆֆի, Ի.Հարությունյան և այլք), ինչպես նաև ժամանակակից մանկավարժագետների կողմից (Ե.Վ.Բոնդարևսկայա, Ե.Ֆ.Գուբսկիյ, Վ.Պ.Զախարչենկո, Ի.Ա.Կոլեսնիկովա, Յու.Ս. Մայնուլով, Ա.Վ.Մուդրիկ,Վ.Վ.Սերիկով Վ.Պ.Պեշկով, Վ.Վ.Սերիկով, Ի.Վ. Սլոբոդչիկով և այլք):

Բուհի սոցիալ-մշակութային միջավայրը իրենից ներկայացնում է ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, աշխատակիցների համատեղ կենսագործունեության տարածք՝ համապատասխան սոցիալ-մանկավարժական, հոգեբանամանկավարժական, մշակութային, նյութատեխնիկական, տեղեկատվական-հաղորդակցական պայմանների ապահովմամբ: Ռուս գիտնական Վ. Պ. Պեշկովան սոցիալ-մշակութային միջավայրը բնութագրում է որպես հոգևոր, նյութական և հասարակական պայմանների բարդ կառույց [4]:

Ուսանողի անձի սոցիալական կայացումը բուհի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցության տակ ենթադրում է նրա կենսական և արժեքային կողմնորոշումների, դիրքորոշումների ձևավորում, ինքնազարգացման, սոցիալական ինքնիրացման, մասնագիտական պահանջմունքների բավարարում, և մասնագիտական սոցիալականացում:

Արդի ժամանակաշրջանում, պայմանավորված կրթության հարացույցերի փոփոխմամբ, մշակութաբանական, անձնակողմնորոշված և գործունային մոտեցումներով՝ մեծացել են պահանջները բուհում սոցիալ-մշակութային միջավայրի բովանդակության հարստացման, դրա միջոցով ուսանողների սոցիալ-մշակութային, ստեղծագործական ակտիվ

կենսագործունեության կազմակերպման նկատմամբ:

Մեր կարծիքով բուհի սոցիալ-մշակութային միջավայրը ուսանողների սոցիալ-մշակութային կրթության կազմակերպման և սոցիալական դաստիարակության կարևորագույն գործոն է և ինչպես նշում է Տ. Վ. Սեմյոնովսկիխը. «Սոցիալ-մշակութային միջավայրը դա մակրոմիջավայրն է իր ներսում գործող բոլոր գործոններով և մեխանիզմներով» [5]:

Բուհի սոցիալ-մշակութային միջավայրը մանկավարժական մեծ ներուժ ունի ինչպես ուսանողների սոցիալական հարմարման, այնպես էլ կրթադաստիարակչական, հաղորդակցական, ստեղծագործական խնդիրների իրականացման առումով:

Սոցիոլոգիական տեսանկյունից սոցիալ-մշակութային միջավայրը սահմանվում է որպես սոցիալական այնպիսի միջավայր, որն ունի որոշակի մշակութային բովանդակություն, որում գերակայում են մշակույթի նորմերն ու արժեքները:

Սոցիալական մանկավարժության տեսանկյունից սոցիալ-մշակութային միջավայրը դիտարկվում է որպես մարդու կողմից իր կենսատարածքի յուրացման և ստեղծման արդյունք՝ օրգանական միասնության մեջ իր կենսագործունեության հոգևոր-բարոյական, սոցիալ-հոգեբանական, առարկայազգայական և ֆունկցիոնալ պայմանների հետ՝ որպես անձի ակտիվության արդյունք:

Մեր դիտարկումները ցույց են տվել, որ մանկավարժական բուհի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը ուսանողների վրա ընթանում է մի քանի ուղղություններով և փուլերով: Այդ ուղղություններն են՝

- կրթական,
- ճանաչողական-մտածական,
- դաստիարակչական,
- սոցիալական,
- մասնագիտական,
- մշակութային,

Վերջիններս համարվում են տվյալ կրթական հաստատության սոցիալ-մշակութային միջավայրի համակարգաձևավորող բաղադրիչները:

Այս ուղղություններից յուրաքանչյուրն ունի իր ներքին բովանդակությունը և պահանջում է որոշակի գործառույթների իրականացում.

- **կրթական ուղղությունը** ենթադրում է գիտելիքների, կարողությունների, հմտությունների, մշակութային փորձի փոխանցում :
- **Ճանաչողական-մտածական ուղղությունը** ենթադրում է տեղեկատվության յուրացում

հասկացման մակարդակում և ինքնուրույն կամ կորպորատիվ հետազոտական և համաստեղծագործական աշխատանքների, նախագծերի իրականացում:

▪ **Դաստիարակչական ուղղությունը** ենթադրում է հոգևոր-բարոյական որակների (հայրենասիրության, մարդասիրության, այլասիրության, բարոյականորեն ընդունելի վարքի և այլ որակների), արժեքային կողմնորոշումների, քաղաքացիական, սոցիալական դիրքորոշումների, համոզմունքների ձևավորում:

▪ **Սոցիալական ուղղությունը** ենթադրում է հասարակության մեջ սոցիալական դերեր իրականացնելու պատրաստակամության, տարբեր միջավայրերում հարմարվելու կարողության, իմիջի, մասնագիտական մշակույթի ձևավորում:

▪ **Մասնագիտական ուղղությունը** ենթադրում է մասնագիտական կոմպետենցիաների, աշխատանքային մշակույթի ձևավորում, մասնագիտական սոցիալականացում:

▪ **Մշակութային ուղղությունը** ենթադրում համալսարանի ընդհանուր մշակույթի (պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաղորդակցման և մանկավարժական մշակույթի, անհատական իմիջի, համալսարանում ձևավորված ավանդույթների, արժեքային համակարգի, ամբողջ բուհի տարածքի, ինֆրակառուցվածքների (սրահների, ընթերցասրահների, լսարանների, սննդի, հանգստի գոտիների կահավորվածության և դրանց գեղարվեստական ձևավորվածության, արտաուսումնական դաստիարակչական միջոցառումների և ժամանցի կազմակերպման և այլն) ազդեցության տակ ուսանողի անհատական մշակույթի, գեղագիտական ճաշակի ձևավորում:

Մանկավարժական բուհում ուսանողների սոցիալականացման առաջին փուլն սկսվում է սոցիալ-մշակութային միջավայրին, բուհի առանձնահատկություններին, նորմերին, ավանդույթներին (օրինակ, առաջին կուրսեցիների երդման արարողությունը Խ. Աբովյանի տուն թանգարանում), պատմությանը (համալսարանի թանգարանում), ընթերցասրահների, լսարանների տեխնիկական հագեցվածությանը, կահավորանքին և այլ ենթակառուցվածքների հետ ծանոթացմամբ:

Երկրորդ փուլը բուհի առանձնահատկություններին, կանոնակարգին, ուսումնական ռեժիմին, կրթական գործընթացի պայմաններին ու ընդհանուր պահանջներին հարմարումն է և մասնագիտական առարկաների ուսուցման գործընթացում գիտելիքների, կարողունակությունների յուրացումն ու անձնական կապիտալի աստիճանական ձևավորումը: Ուսանողի անձնական կապիտալը ձևավորվում է ի հաշիվ նրա իմացական ակտիվության, մասնագիտական կոմպետենտության, ստեղծագործական ներուժի, նպատակաուղղվածության, աշխատասիրության, լիդերական որակների դրսևորման, որոշակի իրավիճակում ռիսկի դիմելու ընդունակության, բարոյական կայունության: Սրանք

ուսանողական շրջանի նորագոյացություններն են:

Սոցիալականացման երրորդ փուլում, մանկավարժական, սոցիալ-հաղորդակցական տարբեր տեխնոլոգիաների կիրառման արդյունքում զարգանում և ձևավորվում են ուսանողների հաղորդակցական, խոսքի, մանկավարժական մշակույթն ու մասնագիտական իմիջը, ճաշակը, ստրեսակայունությունը, ռեֆլեքսիան, դրդապատճառային ոլորտը, արժեհամակարգը, ինչպես նաև հանդուրժողականության, քաղաքացիականության, հայրենասիրության, ինքնիրացման, ինքնահաստատման, ինքնակառավարման, մշակութային ինքնության և այլ որակները, որոնք էլ որոշում են նրանց հասարակակնորեն ընդունելի վարքը և հետագա կենսագործունեության բովանդակության իրողությունների հոգևոր և նյութական ուղղվածությունը:

Չորրորդ փուլում, բուհի մասնագիտական կրթական միջավայրում ավարտվում է ուսանողների մասնագիտական սոցիալականացման գործընթացը, որն ըստ Ե. Ն. Կրապիվկոյի՝ սոցիալ հոգեբանական հարմարման և ինտեգրացման գործընթաց է, որի ընթացքում գոյություն ունեցող անհատի ներքին կողմնորոշումների և անձնային ներուժի հիման վրա, որոշակի ագենտների և ինստիտուտների ներգործության արդյունքում իրականանում է մասնագիտական դերային կենսադիրքորոշումների, գիտելիքների, նորմերի, վարքի ձևերի յուրացումը[3]:

Մանկավարժական բուհում ուսանողների մասնագիտական սոցիալականացման արդյունավետությունը պայմանավորված է սոցիալ-մշակութային կրթական միջավայրում նրանց ստեղծագործական, ուսումնահետազոտական, գիտահետազոտական, հասարակական ակտիվ գործունեության կազմակերպմամբ՝ փոխներգործուն սոցիալական, մանկավարժական, հաղորդակցական տեխնոլոգիաների, մեթոդների կիրառման, ուսանողական խորհուրդների բազմաբովանդակ աշխատանքի միջոցով: Այս տեսանկյունից մենք համամիտ ենք Մ. Յու. Կոզլովի այն դիրքորոշման հետ, որ ուսանողների կորպորատիվ մշակույթի ձևավորման և զարգացման հաջող կառավարումն ապահովվում է տարբեր սոցիալ-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք ապահովում են կորպորատիվ արժեքների և նորմերի փոխանցումը: Դրանք ապահովվում են մշակութային բուհական մշակութային ավանդույթների ձևավորման, դրական իմիջի ստեղծման (բուհի գրավչության բարձրացման), ուսանողական ինքնակառավարման խթանման(մասնակցությունը մշակութային արժեքների և նորմերի գործնական վերամարմնավորմանը) գործընթացներում և սոցիալական մոնիտորինգի միջոցով(բուհի կորպորատիվ մշակույթի իրական վիճակի և փոփոխության դինամիկայի հատորոշման)[2]:

Այսինքն՝ նշված տեխնոլոգիաների կիրառման միջոցով հնարավոր է հասնել բուհի

սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը կրողների սոցիալական և մշակույթային ինքնության զարգացման բարձր մակարդակի՝ միևնույն ժամանակ սահմանափակելով արտաքին և ներքին բացասական ազդեցությունները:

Այսպիսով բուհի սոցիալ-մշակութային միջավայրի ազդեցությունը ապագա մասնագետների սոցիալական կայացման վրա կարող է դրական և արդյունավետ ընթանալ, եթե այն բավարարում է նրանց մասնագիտական-կրթական, գեղագիտական պահանջմունքներն ու հետաքրքրությունները:

Այդպիսի փորձ արվել է մեր համալսարանի գեղարվեստական կրության ֆակուլտետում: Դեկանի և ֆակուլտետի համապատասխան ամբիոնների ջանքերով ստեղծվել են լիարժեք, գեղարվեստական հետաքրքիր ձևավավորմամբ լսարաններ, որոնցում ուսանողները ոչ միայն գիտելիքներ են ձեռք բերում, այլև լսարաններում կախված դասախոսների, տարբեր տարիների շրջանավարտների գեղարվեստական գործերը՝ նկարները, քանդակները, գոբելեններ, դիզայներական աշխատանքները և ընդհանրապես ամբողջ կահավորանքը, տեխնիկական միջոցները նպաստում են նրանց ստեղծագործական կարողությունների, կերպարվեստային կատարողական հմտությունների, գեղարվեստական մտածողության ու ճաշակի, գեղագիտական արժեհամակարգի վրա՝ ապահովելով մասնագիտական սոցիալականացման գործընթացի արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бондаревская А. И. Культурно-образовательное пространство вуза как среда профессиональноличностного саморазвития студентов: автореф. дис. … канд. пед. наук. Ростов н/Д, 2004.

2. Козлов М. Ю. Социальные технологии управления корпоративной культурой высшего учебного заведения: автореф. дис. … канд. социол. наук. Белгород, 2008.

3. Крапивко Е. Н. Социокультурные девиации студенчества в контексте переоценки ценностей в современной России: дис. ... канд. социол. наук. Ставрополь, 2006.

4. Пешкова В.П. Социокультурные технологии Формирования корпоративной культуры студенческой молодежи. ВЕСТНИК КемГУКИ26/2014.- с.248-254.

5. Семеновских Т. В. Социокультурная среда как фактор личностного развития ребенка. URL: https://cyberleninka.ru/viewer_images/17539775/f/5.png

COMMUNITY SOCIAL-CULTURAL ENVIRONMENT BETWEEN SOCIAL RESIDENCES BUDUJICH SPECIALIST

The article examines the influence of the social and cultural environment of the university on the social formation of future specialists. The essence of the concept of the social and cultural environment of the university is characterized. A general characteristic of the structural components of the social and cultural environment is given. The influence of the social and cultural environment on the social formation of future specialists is substantiated, which proceeds in several directions and stages: the content of these directions and stages is characterized.

A working definition of the socio-cultural environment of a university has been formed with which a university graduate interacts and which is a combination of objective and subjective factors that contribute to their successful mastering of professional competencies, the formation of professional socialization and the social formation of students.

Keywords: *University, socio-cultural environment, upbringing, educational process, social-communication technologies, image.*